ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

31 մայիսի 2016 թվականի **թիվ 1** քաղ. Աստանա

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջև՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերի մասին

Հաշվի առնելով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ ««Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին» 2016 թվականի մայիսի 31-ի թիվ 3 որոշման ընդունումը՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) կառավարություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ՝

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջև՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 4.29-րդ հոդվածի դրույթներն իրականացնելու նպատակով հավաստագրման եւստուգման էլեկտրոնային համակարգը մշակելիս,

ինչպես անե ապրանքների ծագման՝ Համաձայնագրի 4.31-րդ հոդվածով նախատեսված արտագնա ստուգումներ անցկացնելիս ապահովել Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության հետ տեղեկատվական փոխգործակցության միասնական մոտեցումների կիրառում.

էլեկտրոնային տեղեկատվության կոնսոլիդացված փոխանակումն «Էլեկտրոնային տեղեկատվության կոնսոլիդացված փոխանակման մասին» համաձայնագրի 5.7-րդ հոդվածին համապատասխան կանոնավոր կերպով իրականացնելու նպատակով ապահովել էլեկտրոնային տեղեկատվական փոխանակման պահանջների, կառուցվածքների, ձևաչափերի եւ տեխնիկական պայմանների միասնականացում հաշվի առնելով Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգի օգտագործման նպատակահարմարությունը դրա կազմակերպման համար:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում ««Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի մայիսի 31-ի թիվ 3 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**